չունչ սիստեմայով մեռցնում են ուսումնասիրութեան և ուրեմն ընթերցանութեան պահանջը նոր սերունդի մէջ։

Գրագիտութիւն, այբբէն սովորեցնելը, առանց զարթեցնելու պահանջ դէպի վառ մտաւոր կեանքի, մեռած մեքենայական գործողութիւն է, որ ոչինչ կենսաբար արդիւնք երբէք չի ունենայ։ Եւ կարող են արդեօք գրագիտութիւն, այդ բառի լայն նշանակութեամբ, զարթեցնել մեր մանկավարժների պէս մարդիկ, որոնք իրանք սկսած ծխական դպրոցների վարժապետներից մինչև ճեմարանի պրօֆէսօրները, իրանց ամբողջ կեանքը իրանք ոչ մի գիրք չեն կարդում, իրանք մտաւոր կեանքով չեն ապրում։

Մեր դպրոցները ոչ արհեստ են սովորեցնում, ոչ էլ գրագիտութիւն են տարածում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍԱԼԵԱՆԻՑ

Օգոստոսի 14

Աշխարհիս վերջը մօտեցած գուշակող և շուտով երկրի բոլոր ազգերը ահեղ դատաստանի կարչելու յատուկ նշան գիսաւոր աստղի երեւալը, տեղիս պարսիկ և հայ նախապաշարվածների վրա մեծ ահ ու սարսափ էր գցել։ Այս տարվայ առատ բերքից մեծ քանակութեամբ ցորեն և գարի ունեցող պարսիկներից դիմած են մէկ տարի ժամանակ խնդրելու համար մեծ Մարգարէի միջնորդութեանը։ Մի քանի քրիստոնեաների և պարսիկների մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել աշխարհի վերջին վերա սուրբ գրքերի նշաններով էլ, թէ ազգ ազգի վրա պիտի վեր կենայ, և թագաւոր թագաւորի վրա, կը լինեն սովեր, սաստիկ մահեր։ Այդ ամեն նշանները կատարված են համարում Ֆրանսիայի և Պրուսիայի մէջ պատերազմից սկսեալ մինչև Շէյխ Իբադուլլահի կատարած եղեռնագործ արշաւանքը։ Սալեանի բնակիչներին պակասում էր այդ նշաններից միայն երկրաշարժը, որ ահա բախտաւորապէս նա էլ ամսիս 10-ին, երկուշաբթի առաւօտեան 3-րդ ժամին տեղի ունեցաւ։ Սալեանում բաւական զգալի եղաւ երկրաշարժ և կէս րոպէում միմեանց ետևից երկու զարկ կրկնվեցան։

Այս տարվայ վարուցանքի աջող բուսականութիւնը առատօրէն վարձատրեց Լենկօրանի, Սալեանի, և Ջավատի նահանգների հողագործներին անցեալ տարվայ իրանց կրած զրկանքների համար։ Միայն ափսոսում են որ պուդը 1 րուբ. 60 կոպէկով վաճառվող ցորենը և 80 կոպէկով վաճառվող գարին, այժմ բաւական իջնելով ծախվում է ցորենը 60 կոպէկով, իսկ գարին 24 կոպէկով։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 20 օգոստոսի

Ձեր լրագրի 153 համարում կարդացի որ իբրև թէ ես վերադառնալով Կ. Պօլսից, ամեն տեղ ծաղրում եմ այնտեղի հայերին և խմբագիրներին։

Յայտնում եմ որ այդ բոլորը զրպարտութիւն է, որովհետև ես մի այնպիսի ընդունելութիւն գտայ նրանցից, որ երբէք մոռանալու չեմ, մնում է ինձ միայն յայտնել նրանց իմ խորին և անկեղծ շնորհակալութիւնս։

Իշխան Ն. Ամատունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք բժիշկապետ Անդրէաս Դանիելբէգեանցից 10 րուբլ յօգուտ «Journal d'Orient» լրագրի։ Առաջվայ փողերի հետ կանէ 46 րուբլ։

Կիրակի օգոստոսի 23-ին Արծրունու թատրոնում կը լինի հայոց սիրողների ներկայացումն, պ. պ. Արտաշէս Յակոբեանի և Մօյինեանի մասնակցութեամբ։ Կը խաղան առաջին անգամ «Հերկուլէս, կամ կանաչ իշի պանդոկ» կատակերգութիւն մի գործողութեամբ։ Ներկայացման երկրորդ բաժնում կը լինի Ջաւէշտ. Արտաշէս կը կարդայ և կերգէ, Ազայեանց կը կարդայ, Մօյինեանց կերգէ, Սահակեանց կը կարդայ և Բաղդասարեանց կածէ թառի վրա։ Սկիզբը $8^{1}/_{2}$ ժամին, թատրոնի գները սովորական են։ Տօմսակները կարելի է ստանալ թատրոնի կասայում։

Օգոստոսի 20-ին ԹԻՖԼԻՍԻ Սադօվայա փողոցի վրա պ. Մարգարօվի շինութեան մօտ խողովակ շինելու ժամանակ հողային պատերը քանդվել են և երեք մշեցի հայ մշակներ տակն են մնացել։ Երկու ժամից յետոյ հանում են մեռած մշեցիների դիակները։ Պատմում են, թէ մշակները առաջարկել են պ. Մարգարօվին տախտակներով ամրացնել հողային պատերը, բայց Մարգարօվ հրաժարվել է։ Ցանկալի էր հրապարակապէս իմանալ, թէ պ. Մարգարօվ ինչպիսի վարձատրութիւն կը տայ մեռած մշակների ընտանիքին կամ ազգականներին։

Այս օրերս մենք պատահմամբ մտանք Թիֆլիսի Սլավեանսկայա հիւրանոցը մեր մի ծանօթի մօտ։ Հարևան № 11 սենեակից անասելի աղմուկ, երգեցողութիւն, չարմանկի ձայներ էին լսվում։ Հարցրինք, իմացանք որ դա մի երիտասարդ հայ քահանայ է Ն. եկեղեցու որ քէֆ է անում թեթև վարքի կանանց շրջանում։ Տէր-հայրը հարբած, պար էր գալիս տրիպակա պարը իսկ կանայք ծափ էին տալիս։

«С. Петерб. Вѣд.» լրագրում կարդում ենք։ «Այս օրերս մեր մինիստրութիւնը ստացել է Կ. Պօլսի ռուսաց հաւատարմատար պ. Օնուից հետևեալ հաղորդութիւնը։ «Վերջին առաջարկութեան վրա, որ արել են դեսպանները Բ. Դրանը կատարել 61-րդ յօդուածը Բերլինի դաշնագրի, Թիւրքիան պատասխանեց որ ներկայ ժամանակում հազիւ թէ հնարաւոր լինի խաղաղ րէֆօրմներ մտցնել Հայաստանում, որովհետև այնտեղ դեռ վերականգնեցրած չէ կատարեալ կարգ և դեռ հանգստութիւնը քիւրդերի ապստամբութեանից ապահովված չէ։ Կ. Պօլսի կաբինետի կարծիքով յիշեալ պարտաւորութիւնների կատարելը այն ժամանակ հնարաւոր կը լինի, երբ Թիւրքիան վերջնականապէս կը մտցնէ կարգ և հանգստութիւն Վանում, և աջողութեամբ կը վերջացնէ քիւրդերի խնդիրը Պարսկաստանի հետ։ Ինչ որ վերաբերվում է այն միջոցների, որոնք այդ գործի մասին գործ են դրվում, Բ. Դուռը իր ամբողջ ուշադրութիւնը դարձրել է նրա վրա և յոյս ունի շուտով նպաստաւոր հետևանքների հասնել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիեննայի „Journal d'Orient" լրագիրը իր № 34 մէջ յայտնում է որ այն օրից, երբ նա մտցրել է իր պրօգրամի մէջ Հայոց խնդիրը, խմբագիրը ամեն օր այլ և այլ տեղերից շնորհաւորութիւններ և համակրական նամակներ է ստանում, թէ Եւրօպայի դիպլօմատիկական շրջաններից և թէ մասնաւոր անձինքներից։ Եւրօպական լրագիրները սկսեցին արդէն արտատպել նրա յօդուածները Թիւրքաց հայերի վերաբերութեամբ։ Ֆրանսիական լրագիրը շնորհակալութիւն է յայտնում թէ եւրօպական լրագիրներին, թէ Կ. Պօլսի „Մասիս" և Թիֆլիսի „Մշակ" լրագրին, որ սրանք արտատպում են «Journal d'Orient» լրագրի յօդուածները և ջերմ համակրում են նրան։ Լրագիրը խոստանում է հաստատամտութեամբ առաջ տանել իր պաշտպանած հայոց խնդիրը, հիմնվելով օրինական սկզբունքների վրա և տարածելով այդ խնդրի վերաբերութեամբ այն գաղափարները, որոնք անբաժան են մարդկային ընդհանուր իրաւունքից։

Նոյն համարում լրագիրը տպում է մի երկար յօդուած, որ նրա ասելով պատկանում է մի մեծ հեղինակութիւն ունեցող մարդու գրչին և որի մէջ գծագրված են այն րէֆօրմները, որոնց մտցնելը անհրաժեշտ է Թիւրքաց Հայաստանում։

Այդ յօդուածի հետ մենք «Մշակի» հետևեալ համարներում կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։

Իր նախընթաց համարներում «Journal d'Orient» ծանօթացրեց իր ընթերցողներին ընդարձակ և մշակված յօդուածներով Թիւրքաց Հայաստանի վիճակագրութեան հետ, որ մենք աւելորդ ենք համարում արտատպել, քանի որ Հայաստանի վիճակագրութիւնը ծանօթ է մեզ, հայերիս։

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Պրօֆեսօր Ադոլֆ Վագներ արտասանեց Բարլենի մէջ մի ընտրողական ճառ, ուրով ի միջի այլոց յայտնեց, թէ, խօսելով իշխան Բիսմարկի հետ Կիսսինգենի մէջ, նա տեղեկացաւ, որ իշխանը մտադիր է մտցնել ապահովութիւն ծերութեան և հիւանդութիւնների դէմ և որ նա մտադիր է ծխախոտի վրա աւելի մեծ հարկեր դնել այն նպատակով, որ այդ հարկից ստացված եկամուտը միջոց տայ բանւորներին զանազան պատահարների դէմ ապահովելու համար։ Այդ նախագծի աջողութիւնը անկարելի է առանց դրամական նշանաւոր միջոցների և ծխախոտի հարկի մեծացնելը իշխանը ամենալաւ միջոց է համարում հարկաւոր եղած գումարը ձեռք բերելու համար։

Գերմանական կառավարութիւնը վերջին ժամանակներում աշխատում է իր կողմը դարձնել սօցիալ-դէմօկրատներին, որպէս զի նրանց օգնութեամբ ընտրութիւնների ժամանակ կարողանայ յաղթել ազատամիտներին և առաջադէմներին։ Սակսօնական կառավարութեան պաշտօնական լրագրի մէջ տպված է հետևեալը. „սօցիալիստների դէմ ուղղած օրէնքը ցաւակցութեան արժանի, անբնական մի երևոյթ է։ Բոլոր քաղաքացիները պէտք է ցանկանան, որ գոնեա ի սէր հաւասարութեան և կարծիքների ազատութեան սկզբունքների այդ օրէնքը որքան կարելի է շուտ ոչնչացնվի։ Սօցիալիստները չեն ցանկանում ոչնչացնել պետական այժմեան կազմակերպութիւնը, նրանց համար ներկայումս գործունէութեան աւելի ընդարձակ և օգտակար ասպարեզ է բացվում։ Ոչ ոք չէ կարող մերժել, որ մեր բանւոր դասերի վիճակը չափից դուրս անբաւականացուցիչ է և որ նրանց դրութեան բարւոքումը կառավարութեան ամենագլխաւոր հոգսերից մէկն է։ Կառավարութիւնը արդէն 'ի նկատի ունի միջոցներ բանւորների դրութիւնը բարւոքելու համար և այդ միջոցները կարող են աւելի էլ ընդարձակօրէն գործադրվել։ Կառավարութիւնը ուշադրութեամբ կը քննէ այն

Գալով պատկառելի հեղինակի մեծապէս ընդարձակված նախկին հայեացքներին, ընթերցողը կը գտնի, որ հաստատահիմն դիրքերը, որոնց վրա կառուցած է այս հայեացքը նոր գիւտեր չեն և ինչ էլ վերաբերում է մասնաւոր պարագաներին՝ սոքա ծաղկանքար և սեթևեթեալ մածուցած զարդարանք են Ֆրերէ, Կարտմէր, Բէնան, Լավեժրի և այլոց շինած տան պատերի վրա։ Այս պարագաներից մէկը՝ այսպէս ասենք՝ ex abrupto վճիռ է պ. Էմինի կողմից։ Մովսէս Խորենացիի համար, բացատրում է պ. Էմինը,—Մար-Աբասը մատի փաթաթանք էր, որով իր ժամանակակիցների աչքերը կապեց ու իր աշխատութիւնը աւելի բարձր գնահատվելու պատճառաւ յօրինեց ևս Նինուէի դիւանը։ Մովսէս Խորենացին խաբեբայ էր, նա իր ժամանակի որդին էր և այն ժամանակ, շատ էր պատահում այս տեսակ գրականական խաբեբաներ...

Մովսէս Խորենացիի ամբիծ արդարամտութիւնը, ճշտութիւնը ընդունում է մինչև անգամ Renan ասելով Moise de Khorène si credul et si honnéte... իսկ պ. Էմինի համար նա խաբեբայ է... Մենք այս կէտի վրա չենք ուզում երկար կանգ առնել, որովհետև շուտով պիտի հաղորդենք «Մշակի» ընթերցողներին մի ուրիշ գրքի*) բովանդակութիւնը, որտեղ և բացատրվում է թէ Խորենացին չէ խաբել այլ խաբվել է։ Դեռ ևս այս տեսակ ապարդիւն նախատինք չէր ընկած Խորենացու գերեզմանի վրա, որը գցում է պ. Էմինը։

Ահա այս գրքի սեթևեթանքը «Մովսէս Խորենացիի պատմութիւնը Հայկի Թագաւորազն սերունդների վրա, բնաւ չեն կրում օտարական, կասենք անընդմիջաբար՝ քաղդէական յատկութիւններ։ Հայկից սկսած մինչև Տիգրան մեծն և նոյնաւ հանդերձ մենք տեսնում ենք ազգային հայ հերոսներ։ Այսպիսի տիպեր, ինչպէս են՝ Հայկ, Արամ, Արայ և Տիգրան մեծն չէին կարող ստեղծվել քաղդէացիից, որպէս հաւատացնում է Մովսէս Խորենացին Մար Աբասի շըրթունքով, այլ հայից և միայն հայից։ Այս վսեմ պատկերների ստեղծողները հայ վիպասաններն էին»։

Չէ որ ինքը Խորենացին բազմիցս անգամ կրկնում է թէ այդ պատմութիւնները (այսինքն Մար-Աբասի հաղորդած փաստերը) համապատասխանում էին իր ժամանակվայ ժողովրդական վէպերին ու երգերին։ Ուրեմն...

Մովսէս Խորենացին պատմում է թէ ինչպէս Վաղարշակը ուղարկեց Մար Աբասին Արշակի մօտ... «աղաչեմ զքո տէրութիւնդ, հրամայես բանալ զդիւանդ արքունի ընդդէմ առնդ եկելոյ առաջի քոյոյ հզօր տէրութեանդ. զի գտեալ զըղձալին եղբօր քո և այլն»։ Մեր հեղինակը այս տեղերից փոթորգալից ամպ է դառնում ու այսպէս որոտում Մովսէս Խորենացիի և նոյն իսկ Մար Աբասի ու Վաղարշակի գլխին՝։

«Դժուար է հաւատալու որ այս ժամանակ» (Վաղարշակի օրերում) «չը կար ոչ մի հայ գիտնական, որը կարողանար կատարել իր արքայի յանձնարարութիւնը, չէ կարելի հաւատ ընծայել որ այս վերջինը հարկադրված լինէր դիմելու այս գործի համար օտարականին, որովհետև նոյն իսկ Խորենացիից գիտենք որ կային մեհեաններ, քուրմեր, մեհենական պատմութիւններ, մեհենական գրքեր, գիրք թագաւորաց, գրոյցների բաղում մատեաններ և այլն և այլն... Ի հնումն քուրմերը ամեն ազգի համար իմաստութիւններ պահպանողներ և սրանց քննադատողներն էին։ Այսպէս եղել է և Հայաստանում։ Ուրեմն հայ քրմերի մէջ էլ կը գտնվէին այնպիսիները, որք կը կարողանային, եթէ ոչ ևս աւելի գերազանց Մար Աբասից,—կատարել Վաղարշակի բաղձանքը։ Որպէս Մովսէս Խորենացին, նոյնպէս և Վաղարշակը գիտակցաբար անտես են արել վիպեր մատենագրոյց պրած աղբիւրները և այլն»։

Սրանից յետոյ ոչ պահաս էֆֆէկտով բացատրվում է թէ այն ժամանակներում Նինուէի դիւանը չէր կարող լինել, և այլն այնպիսի ծամած ու ծամծմված յայտնի դիրքեր... Չեմ կարծում որ Թիֆլիսի հնագիտական ժողովը, որի համար գրած է այս գիրքը, մի նոր մինչև այժմ անյայտ միտք գտնի նրա մէջ, ինչ էլ վերաբերում է պ. Էմինի քրմերին, առաջ ենք բերում զառամեալ պօէտի հետևեալ տուները։

«Նոքա էին աղաւաղիչք հին պատմութեան,
«Հազարամեակք բարդողք վերայ ձեր հնութեան,
«Հայկակէն Հայկ բանաստեղծողք ցնորից պէս
«Մար-Իբասին խաբողք թէ խելք գլուխդ բերես»

Մեր գիտնականի, պ. Էմինի, մեծապէս ընդարձակված նախկին հայացքները մի գուցէ թէ ունեն իրանց ծագման հեղինակ մեծանուն ակադեմիկի, բազմաշխատ հնախօսի, Բրօսէի մահը...

Գաս. Եղուբեան

---

*) «Ванскія надписи и значеніе ихъ для исторіи передней Азіи» К. Патканова.